

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ղեկարից Տեղեան :

ՀՈՒՄ քաղաքին հոյակապ հին շինուածոցը մէջ խիստ գեղեցիկ և անփնաս մնացածներէն մէկն է աս տաճարս , որ թէպէտ հիմա սուրբ Լստուածածնայ և նմ սրբոց անուանը նուիրած եկեղեցի է , բայց ատենով ամենայն աստուածոց ընծայուած ըլլալուն համար Ղեկարից Տեղեան կ'ըսուի , և յունական բառով Պանթէոն : Լսիկայ շինեց Սարկոս Լքրիպպաս անունով հիւպատոսը , և ուզեց () գոստոս կայսեր հաճելի բանմը ընելու համար՝ իրեն ընծայել իբրև յիշատակ : Երկու մեծ կտորէ ձևացած է աս տաճարս . մէկը գաւիթն է , մէկալը բուն շինուածքը՝ կըր ձևով . ուստի կ'ըսեն թէ Լքրիպպաս աս կըր մասը շինելէն ետքը երբոր տեսաւ թէ խոհեմ կայսրը յանձն չառաւ որ իր անուանն ընծայուի , ան ատեն դրսի գաւիթն ալ աւելցուց , ու Ղիոսի և բոլոր աստուածներուն նուիրեց :

Ղաւթին ճակատը ութը հատ մեծամեծ սիւներ կան , ութը հատ ալ գաւթին ներսի կողմը , բոլորն ալ մէյմէկ կտոր կրանիթ քարէ . ասոնց բարձրութիւնը 38 ոտք ու կէս է՝ , և շրջապատը 14 ոտք . գաւթին երկայնութիւնն է 103 ոտք , իսկ լայնութիւնը 61 : Ղակտի սիւներուն վրայ եւանկիւնի ճակատը ատենով պղնձէ տախտակ մը կայ եղեր , և վըրան Լքրամազդայ բարձրաբանդակ պատկերը ձևացուցած . աս տախտակէն վար շրջանակին վրայ լատիներէն գրած է խոշոր գրերով այսպէս .

1 Խոտալացոց օանաչափով :


M. AGRIPPA. L. F. COS. TERTIVM. FECIT. ուրով կ'իմացուի թէ աս շէնքս շինուած է Հռոմ քաղաքին շինութենէն 727 տարի ետքը , այսինքն Վրիստոսէ 27 տարի առաջ : Լն շրջանակին տակը ուրիշ յիշատակարան մը կայ որ Սեպտիմիոս Սևերոս ու կարակալ լա կայսերը գրեր են , և անկէ կ'իմացուի թէ Վրիստոսի 202 թուականին նորոգուեր է տաճարը :

Ղաւթին մէջտեղն է տաճարին մեծ դուռը . և դրան երկու կողմը մէյմէկ խորշեր կան , որոնց մէկուն մէջ () գոստոս կայսեր ու մէկալին մէջ Լքրիպպասայ արձանը կայ եղեր : Ղաւթին առաստաղակալ գերաններն ու կղմիտրները պղնձէ էին . 663ն կոստանդ Բ կայսրը ան կղմիտրները Պօլիս տարաւ , և իրմէ շատ ատեն վերջը Ուրբանոս Ը պապին ժամանակը գերաններն ու գամբըը հանեցին , անոնցմով սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն ամպհովանի մը շինեցին , և Նրեշտակապետ՝ ըսուած բերդին համար թնդանութներ թափեցին : Կ'ըսեն թէ բոլոր հանուած պղնձին ծանրութիւն է եղեր՝ 45,000,250 լիպրէ : Հիմա միայն մեծ դուռը պղնձէ է , մէյմըն ալ ներսի կողմէն գմբէթին վարի շրջանակը :

Ղրսի գաւթին պէս ներսի տաճարն ալ շատ սիրուն շէնք է : Չւը կըր , տրամագիծն ու բարձրութիւնը հաւասար 132 ոտք է , պատերուն թանձրութիւնը 19 : Չորս բոլորը պատին մէջ իրեք հատ կէս կըր ու չորս հատ քառակուսի մատուռներ շինուած են սիւնազարդ : Լսոնցմէ զատ ութը մանր խորշեր ալ կան գոյն զգոյն մարմարիոնէ սիւներով զարդարուած :

Հին ատենը աս սիւներուն տեղը պղնձէ արձաններ կային կ'ըսեն , որ Տրայիանոսի ու Տիտոսի ատեն հանդիպած կրակներէն փճացեր են : Իսկ խորշերուն ու մատուռներուն

1 Իտ . Sant' Angelo.



մէջ յայտնի է թէ մէյմէկ գլխաւոր
աստուածոցարձաններ դրած են եղեր:
Ըստ տաճարին լոյս առնելու տեղը ա-
ռաստաղին վրայի կլոր բացուածքն
է միայն, որուն տրամագիծը 65 ոտք է:

Հէնքին դրսի կողմը աղիւսով շի-
նած է, և իրեք կարգ հաստատուն
կամարներ են՝ վրայէ վրայ: Վաբե-
թին վրայ կապարով ծածկած է, և
հարիւր իննսուն աստիճան սանդու-
խով ինչուան մէջտեղի լուսամուտը
կ'ելլըցուի: Ըմէն մէկ խորշերուն
ետեւի պատը պարապ է:

Սոնիփակիոս պապը 607^{ին} կամ
610^{ին} Փոկաս կայսրէն խնդրեց առա-
ւաս տաճարը, և ճշմարտին Մտուծոյ
և սուրբ Մտուածածնայ և ամենայն
սրբոց ու մարտիրոսաց նուիրեց՝:
Ետքը Վրիգոր Գ շէնքին վրայ նու-
րոգութիւններ ըրաւ և գմբէթը նու-
րէն կապարով ծածկեց: 713^{ին} Մնաս-
տաս Դ տաճարին քովը պալատ մը
շինել տուաւ իրեն համար. բայց ժԳ
ու ժԴ դարերուն խռովութիւնները
շատ փնաս տուին տաճարին, անանկ
որ արեւելեան կողմը բոլորովին ա-
ւերակ դարձաւ, և հողը այնչափ դի-
զուեր էր անոր բոլորաիքը որ սան-
դուխներով կ'իջնային մէջը, և սիւ-
ներուն մէջտեղուանքը ինչուան տներ
ալ շիներ էին: Սարտինոս Ե անոր
ծածքը նորոգեց, Եւգինէոս Դ ա-
ւերակները գաւթին մէջէն դուրս
հանեց, և Սիկողայոս Ե ուրիշ շատ
նորոգութիւններ ըրաւ: Ուրբանոս
Ը և Ղեքսանդր Է մէջի սիւները
կանգնեցին 1634^{ին} և 1662^{ին}: Ս եր-
ջապէս ամէն պապերն ալ աս անգիւտ
շէնքին վրայ մեծ խնամք ցցուցին,
և իրենց մասնաւոր պաշտպանութե-
ր տակը առած են. անով ահա ինչուան
մեր օրերը հասաւ աս երևելի հնու-
թեան յիշատակը:

1 Լատ. S. Maria ad Martyres.

Պօղոս Պէյ Երուսուֆեան:

Ըն մեծամեծ մարդիկն որ ատեն
ատեն կ'երևնան աշխարհիս երեսը,
և զամէնքը կը զարմացնեն իրենց ի-
մաստութեամբն ու զանազան կատա-
րելութիւններովը, զամէնքը կ'ուրախա-
ցնեն իրենց մեծագործութեամբն ու
բարերարութիւններովը, չեն կրնար
անյայտ ու աննշան կերպով ելլել աշ-
խարհէս. հապա ինչպէս արեգակը
մարը մտնելու ատենն ալ ամենուն
աչքը իրեն կը դարձնէ, նոյնպէս ալ
ասոնք իրենց կենաց փառաւոր շրջա-
նը կատարելէն ետեւ երբոր կը ծած-
կուին, ամենուն աչքը իրենց ետեւէն
կը թողուն, և ամենուն լեզուն կը-
շարժեն զիրենք գովելու փառաւորե-
լու: Ըյսպիսի մեծամեծ անձանց
մէկն էր նաև Պօղոս Երուսուֆ պէյ
ամիրան, որ աս տարի յունուարի
10^{ին} վախճանեցաւ Ղեքսանդրիա
քաղաքը, ու բոլոր ազգին և ազգա-
սիրաց մեծ սուգ պատճառեց: Եւ-
յիրաւի. վասն զի մեր ազգին հա-
մար ինքը լուսափայլ արեգակ մըն էր
որ ծածկուեցաւ, և ամենուն սիրտն
ու գէմքը մութ տխրութեամբ մը
պատեց: Ղեքսանդր մարդուն համար
որչափ մխիթարութիւն է որ իր հայ-
րենի երկրին գոնէ աւերակները տես-
նէ. անոր ներհակ, որչափ տրտմու-
թեան պատճառ է իրեն՝ երբոր ան
աւերակներուն վրայ զարնող լոյսն
ալ մարի անցնի, և զինքը մութութեան
մէջ թողու: Մհայսպէս կ'ըլլայ երբ-
որ ազգին մէջի երևելի անձինքն որ
լուսաւոր ջահերու պէս վառուած են
տեղ տեղ՝ կը վախճանին: Բայց հոս
մնացող ու անոնց բարիքը վայելող
ազգին պարտքն ինչ է: — Ըրժանա-
ւոր գովեստներով անմահացնել ա-
նոնց անունն ու արդիւնքը. ասիկայ
առաջին և գուցէ նաև դիւրին պարտքն
է: Ընկէ զատ, երախտագիտութեան